

ԲՈՐՉԱԼՈՒԻ ԳԱԻԱՌ

Ը. ՀԱՀԱՑՆԱՆԻ

Յ Ա Դ Ա Զ Ե Բ Ե Ն



Էկատ առնելով, որ նոր ժիմուած Թիմիլիս-Կարսիան երկարողին շատ ըստով ոչնչացնելու և ազգագրութեան վերաբերակ բանդապին նիւքերը նաև Լոռում, որ դեռ ապրում էր իւր նախայետական կեանելով, եւ տապահցի կարելուօն չափ ուստ գրի առնելու դրանց, ուստի եւ անցիալ եւ նախանցեալ ամառ ները նախապարհորդեցի այս կողմերում, եղայ բորչալուի գաւառի բոլոր հայաբնակ գիւղերը, բացի Մալիկայից, որի միջով միայն մի երկու ուղղութեամբ անցայ, որովհետեւ այս տեղի նայ ժողովուրդները Կարենի գաղրականներ լինելով՝ ազգագրական տեսակետից չեն տարբերուում Զաւախինի բնակիչներից, որ նոյն տեղից եկած միեւնոյն ժողովուրդներն են, որոնց վերաբերեալ նիւքերը եւ արդին գրի եմ առել եւ նրատարակել „Զաւախին“ խորագրով. Խմ բուն նապատակը եղել է ուսումնասիրելի Լոռու բնիկներին, ուստի եւ քէ՛ նանապարհորդութեան միջոցին եւ քէ՛ յեռյ եւ բաւականոչափ մնացել եմ բնիկ ժողովուրդներ ունեցող գիւղերում եւ մանաւանդ Սձուն (Ուզունլար), որ Լոռու մայրաքաղաքը կարող էր նամարուել.

Խմ անձնական դիտողութիւններն ու նաւաբած նիւքերը վերասուցել եւ լրացրել եմ քէ՛ անեփա եւ քէ՛ սպուած գրութիւններով, որ կարողացել եմ գտնել. Առ աշխններից նշանաւոր են. 1) Մեր յայտնի պատմաբան պ. Ծղկեսանդր Երիցեանի բորչալուին վերաբերեալ ժամանակագրական տեղեկութիւնները, ուսւերեն լեզուով. 2) Նոյնակա իւր բազմարիւ նետազօտութիւններով յայտնի պ. Ս. Զելինսկու բորչալուի գաւառի Լոռու տրջանի արքունական գիւղացիների անտեսական դրսքեան մասին նիւքեր, ուսւերեն լեզուով. 3) Վաղամետ իկ Եղիշէ Երզնիեանի (նադրասեցի) նաւաբած ժողովրդական բանասեղծութիւնները, որ արժանապատիւ Նզնիկ հայանայ Երզնկեանը նանց ինձ յանձնել, եւ 4) Աւրսունական բռականներին Աւզունլար գիւղում ուսուցիչ, իսկ այժմ նոյն գիւղում խանութպան պ. Գեորգ Խարագեանի «Մի

տարի գիւղում կամ վարժապետի յիշատակարանը՝ խորագրով գիւղական անցների բաւական ստուար օրագրութիւնը, որից ես բաղեցի զուս ազգագրական նկրերը.

Ցայտնելով իմ խորին սնուհակալութիւնս վերոյիշեալ յարցելի անձնաւորութիւններին, ինչպէս եւ իմ յունցի առակերտներին, բանանամեներին, տանուտերներին եւ այն բոլոր անձիններին, որոնք մի որեւէ կերպ նազատեցին ինձ իմ նանապարհուղութեանս միջոցին, ես կամենում եմ յիշել այսեղ նաև. ինձ յայտնի այն բայոր, արդեն յոյս տեսած աշխատութիւններն ու լրագրական փոքր ի տատ նշանաւոր յոդուածները, որոնք վերաբերում են Բորչայուի գաւառին եւ որոնցից, սակաւ բացառութեամբ. ես օգտուել եմ. Ծյո ցուցակը թերեւս օգտակար յինի այն անձերին, որոնց նետարերութիւնը չի կարողանալ յագուրդ ստանալ ներկայ աշխատութիւննեց. Ինչ վերաբերում է պատմական տեսութեան աղբյուրներին, ես զանց եմ առնում վերսին յիշելու այսեղ, որովհետեւ Բորչայուի գաւառին վերաբերեալ յատուկ գրուած չկայ. այլ զանազան տեղեկութիւններ, սասիկ խառն կերպով ցրաւած նայ եւ վրաց գրերէ բոլոր մատենագիրների մէջ, ես ամիսների բնրացնում թերթեցի սրանցից տատեր եւ ումնից ինչ զրայ, յիշատակեցի իւր ձեզում.

ԿԵՆՔՆԵՐԱՆ. Ստորագրութիւն Հին Հայաստանեաց. Վենետիկ 1822.

Ս. Ջալարեան. Համապարհուղութիւն ի Մեծն Հայաստան. ա. եւ բ. հատոր. Թիֆլիս 1842 եւ 1850.

Կիրակոսեան. Հին Խանացիկ. Մեղու Հայաստանի 1858.

Կիրակոսեան. Գաւառական նանելուկի վրայ. Մեղու Հայաստանի 1860 № 3 եւ 4.

Թ.-քէկ Երզնկեանց. Նկարագրութիւն Սանահնի. Մեղու Հայաստանի 1860 № № 1, 2, 3.

Հռոյաւրտակ Երեխ բազաւորաց. Հայոց, Վրաց եւ Ըղուանից, Հաղբատի վանին մասին. Մեղու Հայաստանի 1860 № 10.

Ա. Ն. Գուգարաց աշխարհ. Փորձ. Ա. տարի № 2.

Բժ. Գ. Քոչարեան. Լոռու գիւղական կեանից պատկերներ. Փորձ.

Ք. Աննապարհուղական յիշատակարան. Շոմազանք. 1884 թ. № № 42, 43, եւ 1885 թ. № № 2 եւ 3.

Երզնկեան Թուսում բէզ. Հնախօսական թեղագրութիւն Հաղբատ (գրաքան). Վաղարշապատ 1886.

Վեհան Տաշացի. Ժողովրդական աղօքների մասին. Նոր-Դար 1887 № № 123 - 127.

Լոռու գաւառի գիւղացիների մատսական վիճակը, Նոր-Դար, 1890 № 182.

Սպասեան. Թիմիլիսից Զալալ-օղլի. Նոր. Դար. 1892 № № 101—108.

Վ. Մենցաբեան. Խոշալու զաւառի ազգաբնակուրեան մասեական դրույնեան. Տարած 1893 և. 247.

Ն. Քարաման. Մալկա. Երեք օր զաղբական նայ զիւղացիների ուղանում. Արձագան. 1894 № 89, 90, 91, 92, 100.

Տ. Թումանեան. Խոշալում. Հորիզոն, գրական հանդես. 1894.

Վիճակաբրական տեղեկուրիւնն Լոռուայ. Արձագան 1895 № 21

Ի. Ցարուրինեան. Սանահին. Ազգագրական հանդես, զիրք.

Գ. Բ. Երջնկեան. Լոռեցոց հարաանիեր. Ազգագրական հանդես, գիրք.

Նորմ. Կայեան բերդ և. Կայենոյ ձոր. անդ.

Տեղացի. Բարձրագաւ և. Գրիգորի վանիք, Արագ. 1897. զիրք Բ.

Բժ. Գ. Տ. Գ. Զաբարիա սպասալարի սուրբ. (կեղծ է), Արձագան 1897 № 74.

Գիւտ ա. Բ. Ազանեան. Հերց Խորից, ննախօսական ուղեւորութիւն. Լումայ 1900 № 1 և 2. և. 1901 № 2.

Ի. Ցարուրինեան. Խորագիր. Լումայ 1901 № 1.

Ե. Ս. Սանահին և. Հաղբատ վանեները, Շարաս 1901 № 8, 9

Գ. Ե. Տուտորդու զերեղմանը. Արձագան 1894 № 143.

Գ. Ե. Ջնող և. Կայծօն բերդերը. Արձագան 1894 № 85

Муроւевъ. Грузія и Арменія. часть II. Спб. 1848.

Абихъ. О кристаллическомъ традѣ въ триадетскихъ юрахъ, въ Зап. Кавк. Отд. Илл. Русс. Геогр. Общ. Кн. X. չ-ый 1879.

Гриммъ: Памятники христианской архитектуры въ Грузіи и Арmenіи. Спб. 1866.

Խոսրով, Путевые заметки отъ Тифлиса до Ахтала. Гифлисъ.

Ա. Երիցօվъ. Монастыръ Ахтала. Кавказская Старина 1872 և. № 2 и 3.

Ա. Երիցօվъ. Монастыръ Ахтала Кавказская Старина 1872 № 1.

Батрадзе. Кавказъ въ древнихъ памятникахъ христианства. Տպուած է նախ „Акты Археографической комиссии“ V և VI հատորներու և յետո „Записки Общества Любителей Кавказской Археологии“ մէջ. Տիֆլիսъ 1875 և.

Ա. Երիցօվъ. Экономический бытъ государственныхъ крестьянъ Борчалинского уезда, Тифлисской губерніи. Тифлисъ 1889 և.

Кондаковъ. Опись памятниковъ древности въ нынѣ отрытыхъ храмахъ и монастыряхъ Грузии. Спб. 1890.

А. М. Арутинскій—Долорукій, В. П. Бочкаревъ и Р. И. Даниловичъ. Районъ Тифлисско-Карсской-Эриванской железнодорожной линии въ экономическомъ и коммерческомъ отношеніяхъ. Изданіе Закавказской железной дороги. Тифлисъ. 1897 г.

Кондратенко. Сборникъ статистическихъ данныхъ о землевладѣніи и способахъ хозяйства въ пяти губерніяхъ Закавказскаго края. Изд. Закавказскимъ статистическимъ комитетомъ. Тифлисъ 1899.

Mém. de l'Acad. des sciences de S. Petersb. VII série, t. VI. № 6. p. 1—46. 8. Կրեմսու հաղբաշի եւ Սամաննի նկարագրութիւնը:

Déscription géographique de la Géorgie, par le tsarévitch Wakhoutch. trad. par Brosset, S. Petersb.

Histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'au XIX siècle. traduite par M. Brosset. S. Petersb. 1849—1858 5 հատոր.

Additions et éclaircissements à l'histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'en 1469 de J. C. par M. Brosset. 1851.

*De Morgan. Mission scientifique au Caucase *). Paris 1890*

*). Հարունակելով որոնել պարբերական հրատարակութիւնների մէջ նորէալույն վերաբերեալ յօդուածներ, գտածներս կը յիշատակեմ աշխատութեանս վերջում:

Ա. ՄԱՍՆ
ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա.
ԲՆԵԴՐՈՒԹԻՒՆ



որչալուի գաւառն իբր մի առանձին վարչական միութիւն կազմուեց 1880 թուին Թիֆլիսի գաւառից: Արա մէջ մտան Բորչալուի հարթութիւնն և Լոռի ու Թրիալէթ լեռնային գաւառակները, կամ հայկական հին բաժանմամբ՝ Գուգարաց աշխարհի Զորագոր (Թիեքեդ գետի հովիտը, իւր Սևորդեաց (Սաղուձոր) և Կալենոյ ձորերով). Ֆորոփոր (Սոմխէթը և Բորչալուն), Տաշերը (Լոռի), Թուելը (Թրիալէթ), Բաղագոր (Բոլնիսի ձոր) և Գմանեաց աշխարհ (Գմանիս) գաւառակները:

Ամբողջ գաւառը կոչուել է իւր մի մասին Բորչալուի հարթութեան անունով, իսկ սա, որ հայերից Դորոփոր, իսկ վրացիներից Սոմխէթ էր կոչում, վերակոչուել է Բորչալու այն թուրք ցեղի անունով, որ Հան-Ըլբասը վերաբնակեցրել է ալստեղ, (1603 թ.) ինչպէս պատմում է վրաց թագաւորագն աշխարհագիր Վախուշտը *):

Այս գաւառը տարածւում է Հիւսիսային լայնութեան $41^{\circ}48'$ ու $40^{\circ}46'$ և արևելեան երկարութեան $61^{\circ}26'$ ու

*) Description géographique de la Géogie, par le tsaré-vitch Wakhoucht, trad. par M. Brosset p.

62°47' միջև, բռնելով 111₉₆, քառ. մղոն, կամ 5,417₂, ք. վերստ, և կամ մօտ 564,472 դեսիատին տարածութիւն:

Պատկանելով Թիֆլիսի նահանգին, նա ընկնում է նրա հարաւ-արևելեան մասում և նրա Գորու և Սղնախի գաւառ-ներից յետոյ ամենամեծ գաւառն է իւր տարածութեամբ:

Մահմանները. — Ամենահիւսափին սահմանալին կէտը կազմում է Համ-ջամ (41°48' հ.) լեռը, որ պատկանում է Թրիալէթու կամ Արշեանու լեռնաշղթալին: Խոկ վերջինս կազմում է այս գաւառի հիւսիսային, բնական սահմանը: Այս գիծը Հսմ-ջամ լեռից փոքր ինչ հարաւ թեքուելով՝ ուղղում է համարեա 41°45' զուգահեռականի ուղղութեամբ, բաժանելով Բորչալուի գաւառը Գորու գաւառից: Այսպիսով այս սահմանը 33 վերստաչափ ձգուելով մինչև Մզիս Ցխվիրի (7390 Փ.) լեռան մօտերքը, թեքում է դէպի հարաւ, ուղղակի այն տեղը, ուր Բորչալուի, Գորու և Թիֆլիսի գաւառներն ընդհարուում են միմեանց: Արևելեան սահմանն արագիսով սկսում է Մզիս Ցխվիրի լեռից, ուղղուում նախ դէպի հարաւ, ապա՝ թեքուելով դէպի արևելք, և կտրելավ Ալգետ գետն ու Դեղին լեռալը (6976'), Եալլո (6409'). Գելլիւդաղ, Խալէկ (6022') լեռների վրայով հարաւ-արևելտեան ուղղութեամբ հասնում է մինչև գերմանացիների Ալէքսանդրահիլֆ գաղութը ու յետոյ արդէն դառնում է դէպի արևելա-հարաւ, և կրկին արևելք՝ կուրի վտակ՝ Խըրամ գետի ուղղութեամբ: Այստեղ սահմանն անցնում է Խրամի նեղ ու խոր ձորով և Արխլու դիւդից ոչ հեռու, համարեա 62°22' ա. երկ. ուղղում է դէպի հիւսիս-արևելք, երկրորդ անգամ կտրում Ալգետ գետը և գաւառի հարթ մասով ու Եաղլուցա լեռնաշղթայով հասնում է մինչև Կուր գետը: Գնալով Ղարայազի դաշտավայրի և Կուրի հոսանքի ուղղութեամբ, այս արևելեան սահմանն երրորդ անգամ կտրում է Ալգետը, նրա կուրի հետ խառնուելու տեղում, անցնելով Խրամի վրայի Կարմիր կամրջով գաւառի լեռնային մասը, հիւսիս արևելքից դէպի հարաւ-արևմուտք: Ապա կտրում է Գովերի-թալա, Սալերկա-թալա, Դոնդար, Ճիշ-թափա, Մարզաքար (7379'), Չաթին-դաղ լեռները, միքանի պտոյտներ է անում և հասնում

գաւառի հարաւային վերջին կէտին՝ Ֆակ-քար լեռան, որի մօտ դտնում է Խալար բարձր զագաթը, որ հասնում է մինչև 9918' բարձրութեան։ Խրամը կուրի մէջ թափուելու տեղից գաւառիս սահմանն այլ ևս չի շիտում Թիֆլիսի նահանգին, այլ Դանձակի նահանգի Ղազախի գաւառին։ Ֆակ-Քարից արդէն սկսում է գաւառիս արևմտեան սահմանը, որ բաժանում է Բորչալուի գաւառը Երևանեան նահանգի Ըղէքսանդրապոլու գաւառից։ Այս սահմանը հարաւաց գէպի հարաւարեմուտք տարածուելով՝ Քեօմաղաղ լեռան վերալով ուղղում է դէպի Սիսի-Մադանի պղնձահանքը (4120'), կտրում է Դերենք գետը, Քարհանք (7328'). Բղովդալ (9184') լեռներով ձգւում է Զուրուխլու և Աղլախանու լեռների ուղղութեամբ և Աղլախան լեռան զագաթից ուղղակի դառնում է դէպի հիւսիս և յետոյ հիւսիս-արևեմուտք։ Այսուեղ նա ուղղում է դէպի Մոկրիա կամ Ղարաաղաջ լեռների զլխաւոր շղթան, և Ախալքալաքի գաւառի սահմանից ոչ հեռու, Լէկիի-դաղ լեռան (10491') մօտ համարեա ուղիղ գծով բարձրանում է հարաւաց հիւսիս։ Անցնիլով Ախալքալաքի գաւառի Թափարաւան լրճից 3-4 վերստ և Պիկէտ լեռան ու Թիքմա-տաշ սիւնի վրայով, այս սահմանը համարեա ուղիղ անկիւնով ուղղում է գաւառի ամենա-արևմտեան կէտին, Սամսուր լեռան (10777'), կտրում Ղարաղուգէլ, Ջաւ-Նաբաթ (9611'), Տաւ-Գոթելի (9211') լեռները և Կորու գաւառի ուղղութեամբ անցնում նախ հիւսիս-արևեմուտք, յետոյ հիւսիս-արևելք և հասնում Քամշամ լեռան, այն կէտին, որտեղից մենք սկսեցինք գծել սահմանը։

Այսպիսով Բորչալուի գաւառի մեծ մասը շրջապատուած է ընական սահմաններով, կամ կից լեռնուշղթաներով, կամ սըրբանց փոքրիշատէ՝ բարձր ճիւղերով, մօտ 365 վերստ տարածութեամբ։ և միայն հիւսիսային և արևելեան սահմանների մի մասն է իջնում հարթութեան վրայ և ձգւում կուրի և նրա վտակ Խրամի հոսանքի ուղղութեամբ մօտ 85 վերստ, և բլրոտ հարթութեան վրայով Խրամ և կուր գետերի միջև մօտ 30 վերստ։ Այսպիսով Բորչալուի գաւառի սահմանային զինք,

որ հասնում է մինչև 480 վերստի, ընդհարում է հիւսիսից՝ Գորու (մօտ 55 վ.), արևելքից՝ Թիֆլիսի (մօտ 145 վ.) և Ղազախի (մօտ 100 վ.), Հարաւից և Հարաւ-արևմուտքից՝ Աղէքսանդրապոլի (մօտ 100 վ.) և արևմուտքից՝ Ախալքալաքի (մօտ 80 վ.) և Գորու գաւառների հետ:

Լեռներ. Բորչալոի գաւառն երեք կողմից լեռներով շրջապատուած բարձրաւանդակ է, որի միջին մասը մի քանի ուղղութեամբ կտրուուած է շրջապատող լեռների ճիւղաւորութիւններով: Միայն հիւսիս արևմտեան մասը, որ կոչում է Բորչալի, սաստիկ տարբերում է միւս մասերից, կազմելով Ղարայազի հարթութեան շարունակութիւնը, որից նա բաժանում է կուր զետով:

Այս գաւառի հիւսիսային սահմանում տարածում է Թիրիալէթի լեռները, որ ձգում են բաւական երկար և կազմում Խրամ և կուր զետերի ջրաբաշխն: Այս լեռները ձգում են Բորչոմի հովտից և կազմում փոքր կովկասի արևելեան կէսը, իսկ արևմտեանը կոչում է Ախալցխա-իմերէթեան լեռնաշղթայ: Թիրիալէթի լեռնաշղթան տարածուելով Փողխով զետը կուրի մէջ թափուելու տեղից մինչև Թիֆլիս քաղաքը, մօտ 133 վերստ երկարութեամբ, իւր ամենալայն մասերում հասնում է միայն 50 վերստի: Այս լեռների միջին բարձրութիւնը հասնում է մինչև 7800 ոտ, իսկ մի քանի դագաթներ 9300 ոտ. Էլ անցնում են: Թիրիալէթի լեռների հիւսիսային լանջը, որ դէպի Գորի գաւառն է նայում, շատ զառիվայր է, և ամբողջովին անտառապատ: Իսկ Հարաւայինը, որ մտնում է Բորչալուի գաւառը, աւելի պակաս զառիվայր է և անտառազուրկ: Թիրիալէթի լեռնային շրջանը սաստիկ ձգուած ձուածիրի ձև ունի, որ երեք կողմից շրջապատուած է կուր զետով և որի մեծ շառաւիզի մի ծայրը մօտենում է Թիֆլիսին, իսկ միւսը Փողխովի և կուրի խառնարանին: Այս շրջանի կենտրոնական մասում բարձրանում է Արջեան լեռնաշղթան, որի ճիւղերը մօտակայ մասերի հետ միասին կրում են Թիրիալէթ անունը: Արջեան լեռնաշղթան դէպի հիւսիս իջնում է շատ ուղղաձիգ լանջերով, իսկ դէպի հարաւ շատ թեք է: Այս մասը ցածրանում է դարաստափերով, որոնք միմեանցից բաժանում են լայն հովիտներով: Դրէթէ

այս բոլոր հովիտներն սկիզբն են առնում հարթ բարձրաւանդակի վրայ, ուր նրանց ափերն արդէն նկատում են ցածր բարձրութիւններով: Բայց դէպի արևելք գնալով, հովիտների յատակը սկսում է խորանալ և միքիչ էլ հեռու, նրանց ափերն բարձրանում են իրր առանձին նշանաւոր շղթաներ: Սակայն և այնպէս՝ այս ափերի սուր ճիւղաւորութիւնների և շղթաների միջին բարձրութիւնն ախտամենալիւ ցածր է մընում արևմտեանից, — Թրիալէթի լեռների բարձր, հարաւային լանջից, որ կազմում է ծալկալի բարձր սարահարթը, որի միջին բարձրութիւնը հասնում է 5000 սոնաչափի:

Թրիալէթի լեռների հարաւային լանջն աւելի նեղ, բայց և աւելի քիչ զառիվայր է, քան հիւսիսայինը, ցանցառ բնակութիւն ունի, բայց և ծածկուած է ընդարձակ արօտատեղիներով և լի է հրաբխային խոշոր քարերով: Հարաւային լանջի լայնութիւնը, որ նայում է Բորչալուի գաւառին, տատանւում է 30 մինչև 12 վերստի մէջ:

Երկրաբանական տեսակէտլոց, Թրիալէթի լեռնաշղթան, պ. Փիլիպպովի կարծիքով, *) շատ նման է Ախալցխա-Իմերէ-թեան լեռներին: Միւկնոյն երկրորդական և երրորդական նստուցքային կազմութիւններն են, որոնց վերին մասերը կտրուած են և մասամբ ծածկուած պղրիփիւրով, նմանաքարով (ծոլերի) և նորագոյն կազմութեան ուրիշ հրաբխային տեսակներով:

Երկրաբանների կարծիքով Ախալցխա-Իմերէ-թեան և Թրիալէթի լեռները մի ժամանակ կազմել են մի լեռնաշղթայ և երբ երրորդական կազմակերպութեան շրջանում Վրացա-Իմերէ-թեան լեռնաշղթան բարձրացել է ուղղահայեաց դէպի Ախալցխա-Թրիալէթեան լեռնաշղթան՝ այս վերջինիս մէջ յառաջացրել է մի ճեղքուած — Բորժոմի հովիտը, որի միջով և դուրս է թափուել Ախալցխայի ծովը: Աբեկս ակադեմիկոսն ենթադրում է, որ Թրիալէթի լեռների ամբողջ հիմքը կազմուած է հատա-

*, В. Н. Филипповъ. Топографическое описание Тифлисской губерніи.

քարից (гранитъ), фиалларашխառն և քլորիտային թերթաքարից (слюдистые и хлоритовые сланцы) և զղձաքարերից (гнейсы), որոնք, սակայն, շատ քիչ են երես դուրս գալիս:

Նստուց քային կազմութիւնից ախտեղ պատահում են միայն կաւճալին և երրորդական, նորարշալրշալին նստուցըներ: Երրորդական նստուցքի հաստութիւնը հասնում է 3000—3500 տոնաչափի: Լեռների գլխաւոր զանգուածը կազմուած է հրաբխային հետևեալ տեսակներից. Խոստաքար (трахитъ, trachyte), անտեղիտ (антезитъ), պորֆիր (авгитовый порфиръ) և այլն, ինչպէս և զանազան տեսակի լուսաներ:

61°53' միջէօրէականի մօտ, Արջւանու լեռնաշղթայից բաժանում է Բեղենեան լեռնաշղթան, և տարածուելով դէպի հարաւ-արևելք՝ մտնում է Թիֆլիսի գաւառի սահմանները: Այս լեռների մի ճիւղն ողջուելով դէպի հարաւ-արևելուուք, կըրկին մտնում է Բարչալուի գաւառը: Այստեղ նրա թեք լանջերը, որ առաւելապէս ժայռոտ են և միայն Ալէքսանդրո-հիլֆ զաղութի հանդէպ ծածկուած են բուսականութեամբ, կազմում են խրամ գետի այն խոր ձորը, որ ձգւում է մինչև Քոլագիրանի կամուրջը, ուր գետը ձորից դուրս է գալիս դաշտավալը:

Թիֆիալէթի լեռներն արևմտեան կողմից միանում են Ցիխէ-Ջուարի լեռնաշղթայի հետ, որ ձգւում է գաւառիս հիւսիս-արևմտեան սահմանից դէպի հարաւ: Այս լեռնաշղթան գաւառիս հիւսիսային մասումը դէպի ներս տալիս է մի քանի ճիւղեր:

Այն տարածութիւնը, որ հիւսիսային կողմից շրջապատուած է Արջւանի լեռներով, արևմտեան և մասամբ էլ հարաւային կողմից Ցիխէ-Ջուարի լեռնաշղթայով և արևելքից՝ Բեղենեան լեռներով ու խրամ գետի ժայռոտ ձորով, կազմում է Ֆալկայի հարթութիւնը: Սա բոլորովին հարթ, համարեա ուղղանկիւն սարահարթ է, որ ունի 30 վերստ երկարութիւն, 10 վ. լայնութիւն և մօտ 340 ք. վերստ մակերևողթ: Նա կազմուած է նմանաքարի լաւալից և բարձրանում է ծովի մակերևողթից 5000 ոտ: Այս սարահարթը ցածրանալով դէպի ա-

բեկլք, վերջանում է հարթ մարդագետիններով հարուստ ըարձբաւանդակով, որն ունի ուղղաձիգ իշխող լանջեր և կազմում է Դեղին լերան վերին մասը: Համարեա այս ամբողջ սարահարթը ծածկուած է արտերով և մարգագետիններով: Կցիա և Խրամ դետի արտեղի ափերը ցածր են և միջոց են տալիս օղտուելու նրանց ջրերից ոռոգելու համար:

Ցիխէ-Քուարի լեռները, որ սահմանափակում են Ֆալկալի հարթութիւնն արևմտեան կողմից, հարաւ ուղղուելով ստանում են Ղարա-աղազ կամ Մոկրիա լեռներ անունը: Այս լեռների նշանաւոր գագաթներն են. Գաւաղրան (9254), Աղբեքար (9765'), Էմլէկի (10.018') և Լէկի-դաղ (10,491'): Մոկրիա (թաց) անունն այս լեռներին տուել են ոռուներն այն կպչուն ցեխի պատճառով, որ գոյանում է սրանց վրայ օղերևողթալին ամենափոքր նստուցքի ժամանակի իսկ թուրքական Ղարա-աղազ (սև-փայտ) անունը վկայում է, որ այս լեռները, որ ալժմ բոլորովին զրկուած են անտառալին բուսականութիւնոց, մի ժամանակ անտառապատ են եղել: Այս լեռների արևելեան լանջը, որ ամբողջովին մտնում է Բորչալուի գաւառը, հետզհետէ լայնանում է և հասնում 10 մինչև 20 վերոտ լայնութեան: Նա բաղկացած է լետին ժամանակի հրարիխական նստուցքալին խառնուրդից, որ ամենափոքր խոնաւութեան միջոցին դառնում է անանցանելի կպչուն ցեխ: Այս լանջերն ամբողջ Անդրկովկասում բայտնի են իրենց հրաշալի արօտատեղիներով:

Ղարա-աղազի լեռներն արևմուտքից 20 վերսորից աւելի ստհմանափակում են Լոռու լեռնալին հարթութիւնը և հարաւում միանում Բգովդալի լեռնաշղթալի հետ: 5—10 վերստ լայնութեամբ տարածուելով՝ ալս լեռնաշղթան իւր զանազան մասերում կրում է առանձին լեռների անուններ, ինչպէս Սղլախան, Զուրուխի և Դվալ: Բգովդալի լեռնաշղթան, որ բաժանում է Բորչալու գաւառն Աղբեքանդրապոլի գաւառուց, իւր հիւսիսալին, տեղ տեղ անտառապատ լանջով, հարաւից սահմանափակում է Լոռու հարթութիւնը, որ կտրտուած է գետակների ժայռոտ հուներով:

Բղովդալի արևելեան կիսում առաւելապէս գտնում են սիէնաքար (сіенитъ), ործաքարալին պորֆիր (кварцовъй порфиръ), դիարիտ (діаритъ), ֆելզիտալին պորֆիր (фельзизиро-вый порфиръ) և բիւրեղալին ործաքար (кристаллический кварцитъ), որ գործնական մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ նրանից ստանում են գաւառի ամենալաւ ջաղացաքարը: Այստեղ ակաղեմիկոս Արիխը գտել է բիւրեղալին կրաքար, որ նման է Ղարայաղի մարմարիօնին, և տանիքի բաւական հաստ թերթաքար: Հարուստ է նաև հանքերով: Բղովդալի լեռնաշղթան մօտ 50 վերստ երկարութիւն ունի, իսկ ամենալայն մասը հասնում է 20 վերստի: Նրա երկու լանջերն էլ միատեսակ թեք են:

Ոչ մի տեղ, ասում է ակաղեմիկոս Արիխը *), այնպէս լաւ ֆեղիտ չլ գտնում, ինչպէս Աւգունլարում, ուր լպատահում են ահազին մեծութեան կտորներ: Արանք ճարտարապետական տեսակէտից շատ նշանաւոր են, որովհետեւ քանդակագործութեան մէջ զործ են ածում, շատ դիմացկուն են, և կլիմայական ազդեցութիւններին դժուարութեամբ են ենթարկում:

Բղովդալի լեռնաշղթալից հիւսիս, Ղարաղազի լեռների Լէկիլի-դաղ գագաթից սկիզբն են առնում Սոմխէթի կամ Սղղիքէուկ լեռները, որ ուղղում են արևմուտքից արևելք մինչև Դիերեդ գետը: Այս լեռներն սկզբում նեղ են, միջին մասում հասնում են 50 վերստ լայնութեան, բռնելով այն տարածութիւնը, որ սահմանափակում է Հետևեալ գետերով. Որօգման, Մաշավեր, Խրամ, Տորչալի (Դիերեդ), Կամենկա և Զիլզի: Այս լեռները մեծ մասամբ ծածկուած են ամենալաւ անտառներով: Սոմխէթի լեռները, որ իրենց արևմուտքան վերջաւորութեան վրայ հազիւ նկատելի են, իրենց շարունակութեան վրայ հասնում են զգալի բարձրութեան:

40°17' և 41°30' հիւսիսալին լայնութեան և 62°15' և 62°48' արևելեան երկարութեան միջև տարածում է

*) Геологические наблюдения въ нагорной странѣ между Курой и Араксомъ. фг. Марковъ Зап. Геогр. общ. кн. VIII 1873 г.

Բորչավուխի ընդարձակ ցած հարթութիւնը, որ ռուզմում է Ալգետ, Խրամ, Բորչավի (Դեբեդ) գետերի ղետարերաններով։ Այս դաշտը հիւսիսից սահմանափակւում է Թրիալեթի լեռների և Նաղլուջա լեռնաշղթայի փէշերով, արևելքից՝ Կուր զետով, իսկ հարաւից և արևմուտքից՝ Հայ-Գանձակեան և Առմխէթի լեռների ստորոտներով։ Դաշտի բացարձակ բարձրութիւնը 1070 ոտ. չի անցնում։ Նա մօտաւորապէս բռնում է 520 ք. վերատ տարածութիւն։ ամենամեծ երկարութիւնը հասնում է 35 վերատի, լայնութիւնը՝ մինչև 26 վերատի։ Բորչավուխի հովիտը, արտերն ոռոգող ջրերի առասութեան պատճառով, սաստիկ արդաւանդ է և խիստ բնակութիւն ունի։ Նրա մակերեւոյթը բոլորովին հարթ է, գուրկ անտառալին բուսականութիւնից։ Այստեղ գետերը հոսում են ցած ափերի միջով և արտերը ջրելու բոլոր լարմարութիւններն ունին։ 62⁰ միջէօրէականից դէսի արևելք, Առմխէթի և Քզովդալի լեռները մօտենում են միմեանց լրենց ստորոտներով և կազմում Կամենկա գետի հովիտը։ Իսկ 60⁰ միջէօրէականից արևեմուտք՝ այս լեռների միջև տարածում է բոլորովին հարթ բարձրաւանդակ - Լուռդաշտավայրը, որ կլոր ձև ունի և բռնում է 450 ք. վերատ տարածութիւն, մօտ 4700 ֆ. միջին բարձրութեամբ, և կազմուած է Անդրկովկասում սովորական հրարխային տեսակներից, ինչպէս են բազալտ (բազալտ) և խստաքար (տրախիտ)։ Այս վերջիններս երբեմն երես են դուրս դալիս։

Այս դաշտավայրի հիւս արևմտեան մասում կան շատ ճահիճներ և շամբեր, որ սկիզբն են տալիս շատ զետակների և վտակների։ Միւս մեծազոյն մասը ծածկուած է պարսրտ արօտներով, որոնք զիւղերի մօս փոխում են արտերի։ Հողը առաւելապէս մութ շագանակագոյն կամ տիպական սևահող է, և մասսամբ կաւահող, տեղ տեղ լի հրարխային տեսակների քաբալին մնացորդներով։ Անտառներ պատահում են միայն Քալալօղու մօտերքից։

Գետերը. — Գետերով, գետակներով շատ հարուստ է այս դաշտառը, նրան է պատկանում Խրամ գետի աւազանը և Ալգետի միջին ու ներքին ընթացքը։

Խրամ. Սա, որ Կուրի աջ վտակն է, սկիզբն է առնում Բարչալուի գաւառուց դուրս՝ Ցիրա-ծղարսու-մթա լերան հարաւային ստորոտից և Հոսելով Տաւ-Գոթելի գագաթից փոքր ինչ հիւսիս՝ մտնում է այս գաւառը՝ պատմական Կցիա անունով։ Ապա Աւրանլի զիւղի մօտ դուրս է գալիս Դավիկայի դաշտսվայրը և սաստիկ գանդաղ Հոսելով՝ յառաջացնում է ճահճային ափեր։ Եղդի-քիւլիսա զիւղի մօտ նրա մէջ թափւում են ճախ կողմից՝ Քինիս և աջից՝ Նարդւան և Անազմա վտակները։ Հոսելով շատ քիչ բարձրացող ափերի միջով, Կցիան Դավիկա ընթացի (Խունիա-ղալա) մօտ ստանում է Խրամ անունը։ Այնուհետև Բարժաղարս զիւղից սկսած, նրա երկու կողմից տարածում են հրաբխային զանգուած ունեցող բլուրներն, որոնք ջրի մակերևոյթից տեղ տեղ մինչև 500 ոտնաչափ բարձր են։ Մալկայի դաշտավայրի բնակիչները չեն օգտում Խրամից՝ ջրբեկու իրենց դաշտերը, որովհետև տեղի բարձրութեան պատճառով (մօտ 5000 Փ.) հողը շատ գանդաղ է չըրանում, մանաւանդ որ ամառը վտակները դուրս գալով ափերից, հարկաւոր եղածից շատ աւելի խոնաւութիւն են տալիս երկրին, այնպէս որ ցանքսերը շատ անգամ աւելի խոնաւութիւնից են վրնասւում, քան թէ չորութիւնից։ Բայց Խրամն այս տեղերում տալիս է այն համեղ՝ ձկների մի քանի տեսակները, որոնք թիֆլիսում յարտնի են ընդհանուր «Խրամուլի» անունով։

Ալէ քսանդրսհիլֆ դաղութից ներքեւ Խրամն աջ կողմից ընդունում է իւր երկու նշանաւոր վտակները՝ Չոչիան և Ղարաբուլախ, որոնք սկիզբն են առնում Մոկրիա լեռներից, իսկ ձախ կողմից՝ մի քանի աննշան վտակներ։ Մօտ ութսուն վերստ հոսելով նեղ ձորի միջով՝ Խրամն Արքիլու թքքարնակ զիւղի մօտ դաշտ է դուրս գալիս։ Փոքր ինչ ցած, Մոլլա-Ահմէտլի գիւղի մօտ Խրամի մէջ աջ կողմից թափւում է աւելի ջրառատ Մաշաւեր (նոյնպէս Զապալ) վտակը։ Սա կազմուելով Մոկրիա լեռներից ըղինող բաղմաթիւ լեռնային վտակներից, բաշքեցուտ զիւղի մօտ ձախ կողմից ընդունում է Մահմուտլի վտակը, և շուտով մտնում մի բաւական խոր ձոր։ Ապա նրա մէջ թափւում են նոյն աջ կողմից ուկու աւագով հարուստ Բինաձոր

և Դամբրլուտ վտակները. սակայն Մաշաւեր զետակը մինչև Քվեշի զիւղը շարունակում է հսուել խոր հունով, համարեա ոչ մի օգուտ քրերելով շրջապատող դաշտերին: Խոկ Բաշքեչուտ զիւղից մինչև Քվեշի զիւղը զտնուող այդիներն ու պարտէզներն առաւելապէս ջրւում են Մաշաւերի մէջ թափուող վտակների ջրով: Եկատերինէնֆէլդ զագութիւնում է Վաշաւերն ստանում է զիւղատնտեսական նշանակութիւն, երկու մեծ ջրանցքներով առատութեամբ ջրելով զերմանացիների այդիներն ու մասամբ նաև արտերը: Այս գաղութից ներքեւ, Մաշաւերի մէջ աջ կողմից թափուում է Բոլնիս-չայը, ոռողելով Բոլնիս Խաչէնի, Խատիս Սոպելի, Միդերլու, Արդալա և այլ զիւղերի այդիները և մասամբ նաև արտերը:

Ջմեռն աջ կողմից սրա մէջ թափուում է նաև Ճուլավէր վտակը, որովհետև մնացած ժամանակ նա հազիւ է բաւականանում ոռողելու Ճուլավէրի բազմաթիւ այդիները:

Ամենամեծ և զիւղատնտեսական տեսակէտից ամենաօդտաւէտ ջրանբար հանդիսանում է Խրամի աջ վտակ Զորագետը, որ կոչում է նաև Դիերեդ, Բերդուջ, Մեծ-ջուր, Բորչալա, Պալըդ-չայ և որ վերջերս ընդունել է նաև Կամենկա (քարքարոս) անունը: Այս զետը յառաջանում է Մոկրիս լեռներից սկիզբն առնող Ջեղի և Զարաղալա վտակների միախառնումից, Զալալօղու մօտ, և կոչուում է Կամենկա: Զալալ-օղու կամուրջից փոքր ինչ բարձր, աջ կողմից Կամենկայի մէջ թափուում է Զուբուխու վտակը, ուր աջ և ձախ կողմերից ջրանցքներ են անցկացրած Զալալ-օղու ջըրաղացների և պարտէզների համար: Զալալ-օղուի զիւղից ներքեւ ձորը, որով որոտալով անցնում է Դիերեդ,-հետզհետէ նեղանում և խորանում է և բոլորովին անմատչելի և ոռողելու տեսակէտից անօղուտ դառնում բնակիչների համար: Լուի բերդի մօտ Դիերեդի մէջ թափուում է ձախ վտակ Ծղղիքէիւկ գետակը, իսկ աւելի ցածր Լեջան, Ագարակ, Ցվան-դարա և Տոտկալ-ջուր վտակները: Այս բոլորը բղխում են Սոմխէթեան լեռների արևմտեան ճիւղերից, արտղընթաց են, պտտեցնում են մի քանի ջրաղացներ և ջրում տեղացիների աննշան պարտէզները: Կուրթան զիւղի մօտ Դիերեդ գետի հետ միանում է Բոլովդալի ճիւղերից սկիզբն առնող

Գարգառայ-զետը: Այնտեղից Դիբեդ զետը իւր հարաւ արևելքան ուղղութիւնը փոխում է դէպի արևելք և Դամթեր զիւղի մօտ մտնում է սաստիկ նեղ, բգովդալի և Սոմխէթի լեռների ճիւղերից յառաջացած անցքը, իետոյ և թափուելով 20—25 ֆ. բարձրութիւնից, կազմում է մի աղմկալի, դեղեցիկ ջրվէժ: Եւ ապա հիւսիս ուղղուելով՝ խառնում է Փամբակ զետի հատ, որ դալիս է Երևանեան նահանդի Եղէքսանդրապոլի գաւառից, ընդունելով Քեօլազիրան և Չանախչի կամ Ալեքսանդրի-ջուր վըտակները: Մյուլհետև Դիբեդը անցնում է մի գեղեցիկ, անտառապատ հովտով, որ տեղ-տեղ 500—600 ոտ. բարձրութեան քարաժայուերով է պատած, և որից վերև տարածւմ են հայրնակ զիւղերի: Եւ չնայելով, որ չափազանց դժուար է իջնել այս ժայռոտ հովիտը, այնուամենայնիւ, որա լանջերը պատած են հայ զիւղացիների այդիներով և պտղատու ծառերի պարտէցներով: Ակսած Գևեդ զիւղից մինչև Այգեհատ ամբողջ Հովիտը պատած է խաղողի այգիներով և թութունի տնկարաններով, իսկ այն կողմը՝ պտղատու ծառերի 'պարտէցներով և բանջարանոցներով: Դամթեր զիւղից մինչև Արշիսի այգիները, որ մօտաւրապէ՛ 50 վերստ տարածութիւն է, Դիբեդ զիւնը ընդունում է ձափի կողմից, Սոմխէթեան լեռներից՝ Սեղստի, Լեալ-վար, և Ռէ-քիլիսա, իսկ աջ կողմից՝ Հայ-Գանձակեան լեռնաշղթալից ճիւղերից՝ Սոտուածածին, Որնակայ-ջուր, Փիվանք, Բերգա-ջուր, Ճնողա-ջուր և Արշիս վտակները:

Գուրս գալով Բորչալուի դաշտը, Դիբեդն առատութեամբ ջրում է այստեղ տարածուած բոլոր թուրքարնակ զիւղերի դաշտերը և Կարմիր կամուրջից փոքր ինչ բարձր թափում խրբամ զետի մէջ:

Ալգետը, որ կուրի ձախ վտակն է, պատկանում է Բորչալուի գաւառին միայն իւր վերին և ներքին հոսանքով: Ըսկիզբն առնելով Թրիալէթու լեռներից, նա Մանդիսի մօտ ուղղուում է հարաւ-արևելք Թիֆլիսի գաւառը և ապա մտնում է Բորչալուի գաւառը Մարնէուլ զիւղից 7 վերստ հեռաւութեան վրայ: Այս զետը շատ ջրառատ չէ, ամառը ջրանցք-

ներում դնում է ոռողյան համար, և գետի հունը բոլորովին չըրանում է:

ՀԾՆՔ. — Բորչարուի գաւառում մեծ լճեր չկան, այլ մի երկու սաստիկ փոքր լճակներ, որոնք գորացել են ձիւների և անձրեների ջրերից՝ հանգած հրաբուղիների կալնուած բերաններում: Այս բոլոր գետերը են. Բաշքէօլի լճակ Ֆալկայում, Բաշքէօլի գիւղի մօտ, և Սալիօլնի-դեօլ Բաշքէչուտի մօտ: *)

Հ Ա Ն Ք Ե Բ

